

աւելի նմանողն էր քառակուսի տփի ձեւով, որոյ մէկ կողին վրայ կար հնոցին դռնակը, եւ վերին երեսին բոլորակ ծակ մը՝ որոյ վրայ կը հանգչէր անօթը: Այս ծակը կըրնար եւ մեկէ աւելի լինել ըստ կարեւորութեան խոհանոցին, եւ այն ժամանակ կրակարանին ձեւն ալ կը փոխուէր (Պար. Բ, 1195-6): Յովհ. կաթողիկոս կը պահէ տակաւին «կրակարան» կոչումը (329): Բայց իւրմէ երկու դար վերջ կը գտնենք ակոռք մը, յիշուած նախ Ալաւկայ որդիէն՝ այսպէս. մուկն «թէ ի թոնդրուք կամ մերձ առ ակոռք գտանիցի, անվնաս են նոքա եւ այլ ամանքն որ ի վերայ իցեն» (Գ): Ակութին «ի վերայ» եփելու աման կը դնեն. ուրեմն սա դեռ ծանօթ կրակարանն է: Իւր ձեւն ալ կը նշմարուի այդ վկայութեան մէջ. մուկը կընայ գտուիլ «մերձ առ ակութ», մինչ դեռ թոնդրուքին մէջն իսկ կ'ընկնի. ուրեմն ակութը բարձր էր գետնէն՝ ուր մուկը զժուարաւ կընար ելնել: Ակոռքին կը յաջորդէ րուայ կոչումը. եւ վարդան այդ երկուքն ալ կը համեմատէ ἑσχαρρα (կասկարայք) բառին առաջին նշանակութեան (կրակարանի) հետ, ըսելով. «կասկար՝ է ակոռք որ րուայ ասի» (Վրդ. Ղեւտ. 1Գ). կամ «Մտանելով (գորտերն) ի թոնիը եւ ի րուայս,